

տուեալ¹ ամենայն² զաւրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն որ³ ելին⁴ զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ ⁵զեղբարցն որդիս ի տեղի⁶ նոցա⁷ մատուցաներ, եւ ⁸զհւրաբանչիւր զաւրս տայր նոցա, զի⁹ դեռ եւս ինքն ունէր¹⁰ ¹¹զամենայն աշխարհն:

8 ¹²Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաբանչիւր զաւրաւք¹³ եւ¹⁴ ¹⁵ամենայն պատրաստութեամբ, նոքա եւ որ բունքն¹⁶ ¹⁷հաստատուն կացեալ էին ի տեղւոջն:

9 Ներշապուհ¹⁸ Արծրունի,

Եւ Խորէն Խորիսոռունի¹⁹,

Եւ ինքն Սպարապետն,

²⁰Եւ Արտակ Պալունի,

Եւ Վահան Ամատունի,

²¹Եւ Գիւտն Վահեւունեաց,

Եւ Թաթուլ Դիմաբետան,

Եւ Արշաւիր Արշարունի²²,

Եւ Շմաւոն Անձաւացի²³,

Եւ Տաճատ Գնթունի²⁴,

1 Ըստ հրաման առեալ

2 Է զամենայն

3 Բթ որք

4 Ը էին փխ ելին

5 ԱԲԴԶԵԹԻՎԾ¹Ծ²Ծ⁶Ծ¹⁰Ծ¹² $\alpha\gamma$ չիք կամ զեղբարցն որդիս Գ զեղբարցնիս (!) փխ զեղբարցն որդիս Դ զեղբարսն Կ կամ զեղբարցն իսկ

6 ԵԶԸԺԽԾԻ α ի տեղիս Է ի տեսիլ փխ ի տեղիս

7 Գ ի տեղիս սորա

8 ԱԲԶԹԺԻ եւ զհւրաբանչիւր զարարս տայ նոցա ԳԵԽԾԿՅՅՏ¹Տ² տան փխ տայր Է զգօրս տալ

9 Կ եւ փխ զի α քանզի փխ զի

10 Դ բռնացեալ ունէր

11 Ը չիք «զամենայն-հասանէին»

12 ԵԺԸԽՅՏ¹Տ² եւ ամենեքեան փութով

13 Բթ չիք զօրօք

14 ԳԿ չիք եւ

15 α չիք «ամենայն-ի տեղւոջն»

16 Բթ բուն

17 Խ հաստատութեամբ Բ հաստատեալ էին

18 ԱԲԳԴԵԹԻԿԾ¹Ծ²Ծ⁴⁻¹³Ծ¹⁷⁻¹⁹Ծ²⁶ $\alpha\gamma$ Ներշապուհ (α Ներշապուհ)

19 α Խոռիսոռունի

20 α եւ Վահան Ամատունի եւ Արտակ Պալունի

21 Տ² եւ Գիւտն Վահեւունեաց միւս բոլորը՝ Գունդն

22 Դ α Աշարունի

23 ԲԴԾ⁴⁻⁵Ծ^{12,14,27} Անձեւացի

24 Դ Զթունի Ծ¹Ծ² α Զնթունի ԵՅԾ¹² Գըթունի